պաշտօնատէր տրամադրութեանց, ու ապա Նախակրթարանին մէջ շնորհաւորեցին ներկայիր Հոգեւոր Հովիւը։

— Հոգշ. Հայրերը ներկայ գտնուեցան Կիրակի, 12 Սեպտեմբերի առաւօտուն, Յոյն-Կաթոլիկ նոր Եպս.ի մատուցած անդրանիկ Ս. Պատարագին, իրենց եկեղեցիին մէջ։

● Ուր. 17 Սեպտ.— Յոյն-Կաթոլիկ համայնքի նոր Հոգեւոր Հովիւ Գերշ. Տ. Հիլարիոն Գապուճի Եպս. իր առաջին պաշտօնական այցելութիւնը տուաւ Պատրիարքարանիս եւ ընդունուեցաւ Ամեն. Պատրիարք Ս. Հօր կողմէ։

● Շբ. 18 Սեպտ.— Կէսօրէն առաջ, Ս. Աթոռ վերադարձաւ Ս. Ուխտիս Միաբան եւ Ժառ. Վարժարանի եւ Ընծայարանի նախկին Տեսուչ Հոգշ. Տ. Յակոբ Վրդ. Վարդանեան, տասնչորս ամիսներու բացակայութենէ մը ետք։ Հոգշ. Հայրը այդ միջոցին կը գտնուէր իբրեւ Նուիրակ Հարաւային Ամերիկա, եւ ապա պաշտօնով՝ Մարսէյլ։

● Եշ. 23 Սեպտ.— Առաւօտեան ժամը 8ին, Ամեն. Պատրիարք Ս. Հայրը, ի գլուխ Միաբանութեան, բացումը կատարեց Ժառ. Վարժարանի եւ Ընծայարանի 1965–66 դպրոցական տարեշրջանին։

— Կէսօրէն ետք, Հոգշ. Տ. Կիւրեղ Վրդ. Գաբրիէլեան եւ Տիար Կարապետ Հինդլեան ներկայ գտնուեցան Ամերիկեան Հնագիտական Վարժարանի մէջ, գիտական վերամուտի առթիւ սարքուած թէյասեղանին։

— Հոգշ. Հայր սուրբն ու Պրն. Հինդլեան ապա ներկայ եղան Սէուտական Արաբիոյ ազգային տօնին առթիւ, Սէուտական Արաբիոյ Ընդհ. Հիւպատոսին կողմէ ՍԷՆԹ Ճորճ պանդոկի մէջ տրուած ընդունելութեան։

●

## ԳԵՐՇ. Տ. ՎԱՀԱՆ ԵՊՍ. ՏԷՐԵԱՆ Ս. ԱԹՈՌՈՅՍ ՄԷՋ

Շաբաթ, 25 Սեպտեմբեր 1965-ին, Ս. Աթոռ ժամանեց Գերշ. Տ. Վահան Եպս. Տէրեան, Արտասահման Թեմի Առաջնորդական Փոխանորդը։

Նոյն երեկոյ Գերշ. Սրբազանը նախագահեց Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ պաշտուած Հսկման արարողութեան, իսկ յաջորդ օրը՝ Կիրակի, 26 Սեպտեմբեր, Խաչվերացի տօնին, հանդիսաւ պատարագեց Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ եւ խօսեցաւ ներշնչեալ ու իմաստալից քարոզ մը։ Իր քարոզի սկզբնաւորութեան, Գերշ. Սրբազանը հաղորդեց Ամենայն Հայոց Հայրապետ Տ. Տ. Վազգէն Ա. Վեհափառի ողջոյնները՝ Ս. Աթոռոյս Ամենապատիւ Պատրիարքին, գնահատելով Միաբանութեան եւ հաւատացեալ ժողովուրդին։ Համառօտիւ անդրադառնալէ ետք մեր Հայրենիքի կրօնական, մշակութային, շինարարական եւ այլ մարզերու մէջ արձանագրած փառաւոր նուաճումներուն, Գերշ. Սրբազանը խօսեցաւ օրուան տօնին եւ Խաչի խորհուրդին մեր դարաւոր պատմութեան ընթացքին գգեցած բացառիկ նշանակութեան շուրջ։ Հայը խաչի հաւատքին համար ու խաչեալի սիրոյն չվարանեցաւ մահը յանձն առնել, եզրակացուց Սրբազանը։ Իր խօսքի աւարտին, Գերշ. Հիւրը կարողութիւն եւ արեւշատութիւն մաղթեց Ն. Ս. Օծութեան եւ Ս. Աթոռոյս Ամեն. Պատրիարքին, որպէսզի իրենց զօրավիգ ունենալով հոյլ մը գնահատելի Միաբաններ, առաջնորդեն մեր եկեղեցին ու ժողովուրդը աւելի յուսատու ու պայծառ հանդրուաններու։

Սրբազանը, ընկերակցութեամբ Հոգշ. Հայրերու, այցելեց Ս. Քաղաքի Տնօրինական եւ պատմական սրբավայրերը, կատարեց իր ուխտը եւ ստացաւ հոգեկան մխիթարութիւն։

Կիրակի երեկոյեան ժամը 7-ին, Ժառ. Վարժարանի Հանդիսասրահին մէջ բանախօսութիւն մը տուաւ վարժարանի ուսուցչական կազմին եւ աշակերտութեան, խօսելով Ս. Էջմիածնի եւ Հայրենիքի մշակութային ու շինարարական կեանքին շուրջ։ Ներկայ էին Միաբանութիւնը, Ամեն. Պատրիարք Ս. Հօր գլխաւորութեամբ, որ ըրաւ փակման խօսքը։

Երեքշաբթի կէսօրէ ետք ժամը 4-ին, Գերշ. Սրբազանը խօսեցաւ Ս. Թարգմանչաց Վարժարանի աշակերտութեան, Ս. Էջմիածնի դերին եւ Հայեցի կրթութեան կարեւորութեան մասին։ Աշակերտները խոր հետաքրքրութեամբ ունկնդրեցին Սրբազանին հայրենաշունչ պատգամները։

Գերշ. Սրբազանը մեկնեցաւ Հինգշաբթի, 29 Սեպտեմբերին։

digitised by A.R.A.R.@